Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման նպատակով կիրականացվի նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները կհրապարակվեն հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն, ամփոփում և համապատասխան ձևաչափով տեղեկանքի կազմում: Նշված գործառույթի իրականացումն ուղղված է էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման ընթացակարգի վերլուծությանը, միացման ժամկետների պահպանման վերահսկողությանն ու դրանց խախտման պատճառների որոշմանը: Գործառույթի իրականացման նպատակն է բարձրացնել էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Նախատեսվում է լրամշակել հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, որում հաշվի կառնվեն ոլորտում առկա խնդիրները և բաժանորդների դիմում-բողոքները:

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայում:

Նախատեսվում է իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից առևտրային հաշվառքի սարքի խախտման համար կատարված վերահաշվարկների վերաբերյալ

ներկայացված տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ, ինչի նպատակն է ուսումնասիրել ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման համապատասխան ընթացակարգերի առկայությունը, տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացման համապատասխանությունը վերը նշված ընթացակարգերին, սկզբնական փաստաթղթերում գրանցված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը: Ուսումնասիրության վերջում կնախապատրաստվի արձանագրություն, որը կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Մատակարարի կողմից հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկների փոփոխությունները վերահսկելու նպատակով՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկները կներկայացվեն հանձնաժողովի համաձայնեցմանը:

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի 2014 թվականի փետրվարի 20-ի №056-ՀՆ հրամանով նախատեսված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում հրապարակված տեղեկատվության թարմացում:

Նախատեսվում է մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կամփոփվի և մինչև սույն թվականի մայիսի 1-ը մամուլում կհրապարակվի հանձնաժողովի 2018 թվականի գործունեության հաշվետվությունը:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: